

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ Մ.ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՎԱԳՑԱՆ ՌՈՒՋԱՆՆԱ ՎՅԱՉԵՍԼԱՎԻ

ԼԻՄՖՈՄՍԱՆԵՐԻ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ
ԸՆԹԱՑՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ
ՈՒԼՏՐԱԶԱՅՆԱՑԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԺԴ.00.03 - «Ներքին հիվանդություններ»
մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՍԱԳԻՐ

Երևան 2015

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ МЕДИЦИНСКИЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ М.ГЕРАЦИ

АВАКЯН РУЗАННА ВЯЧЕСЛАВОВНА

ЗНАЧИМОСТЬ УЗИ ПРИ ДИАГНОСТИКЕ И ОЦЕНКЕ
КЛИНИЧЕСКОГО ТЕЧЕНИЯ ЛИМФОМ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени
кандидата медицинских наук по специальности
14.00.03 – «Внутренние болезни»

Ереван-2015


Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԱՆ Արյունաբանական կենտրոնի գիտական խորհրդի նիստում:

Գիտական ղեկավար՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Ս.Ս. Դադբաշյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Ս.Դ. Սաֆարյան
Բ.Գ.Թ., դոցենտ Ա.Ռ. Երեմյանց

Առաջատար կազմակերպություն՝ Վ.Ա. Ֆանարջյանի անվան
Ուռուցքաբանության Ազգային Կենտրոն

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2015թ. դեկտեմբերի 17-ին, ժ.14.⁰⁰-ին ՀՀ ԿԳՆ Երևանի Մ.Հերացու անվան Պետական Բժշկական Համալսարանում գործող ԲՈՀ-ի 028 «Ներքին հիվանդություններ» մասնագիտական խորհրդի նիստում /0025,Երևան,Կորյունի 2/:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԿԳՆ Երևանի Մ.Հերացու անվան Պետական Բժշկական Համալսարանի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2015թ. նոյեմբերի 12-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝  Բ.Գ.Թ. Լ.Գ.Թունյան

Тема диссертации утверждена на заседании Ученого совета Гематологического центра МЗ РА.

Научный руководитель: д.м.н. профессор С.С. Дагбашян


Официальные оппоненты: д.м.н. профессор М.Д. Сафарян
к.м.н. доцент А.Р. Еремянц

Ведущая организация: Национальный Центр Онкологии им. В.А. Фанарджяна

Защита диссертации состоится 17 декабря 2015г. в 14⁰⁰ часов на заседании Специализированного совета ВАК 028 «Внутренние болезни» при Ереванском Государственном Медицинском Университете им. М. Гераци (0025,Ереван, Корюна2)

С диссертацией можно ознакомиться в библиотеке Ереванского Государственного Медицинского Университета им. М. Гераци

Автореферат разослан 12 ноября 2015 г.

Ученый секретарь Специализированного совета  к.м.н. Л.Г. Тунян

ԱՇՆԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Լիմֆոպրոլիֆերատիվ հիվանդությունները բնակչության հաշմանդամության և հիվանդացության հիմնական պատճառներից են: Վիճակագրությունը գրանցում է ԼՊՀ-ի մակարդակի կայուն աճ ԱՊՀ երկրներում [Мерабишвили В.М., 2009; Чиссов В.И. и др., 2012; Давыдов М.И. и др., 2014] և աշխարհում [American Cancer Society., 2011; Ferley J. et al., 2012; Eichenauer D. et al., 2014]: Հիվանդացության հաճախականությունն աճում է տարիքի հետ և գագաթնակետին հասնում 60-65 տարեկանում [Riccabona M., 2000; Stephens N. et al., 2007]: Ըստ ՀՀ-ում 1966-1971թթ. և 1998-2004-2010թթ. կատարված հետազոտությունների գրանցվել է ԼՊՀ-ի հավաստի աճ ի հաշիվ Ոչհոջլինյան և Նոջլինյան լիմֆոմանների [Ամիրխանյան Ե.Ս., Մելքիկյան Ն.Ս., 1991; Дарбашян С.С., 2008; Дарбашян С.С., 2010]: Հայաստանում այս հիվանդությունների աճման պատճառներից է նաև ախտորոշման մակարդակի բարձրացումը:

Չարորակ նորագոյացությունների կառուցվածքում լիմֆոմաները կազմում են 3.1% [Давыдов М.И. и др., 2014]: ՈՆՀ-ի և ՀԼ-ի ախտորոշումը կատարվում է Cotswald (1989թ.) լրացումներով Ann Arbor (1971թ.) դասակարգման համաձայն, որը պայմանավորում է ստանդարտ ախտորոշիչ հետազոտություններ պրոցեսի տարածման աստիճանը ճշգրիտ գնահատելու և փուլը հաստատելու համար, ինչպես նաև հաշվի են առնվում կանխատեսման մի շարք լրացուցիչ գործոններ՝ միջնորմի գոյացության չափեր, ախտահարման այլ մեծ օջախների առկայություն և ստոծանուց ցած տեղակայված ախտահարման տարածվածության աստիճան:

Լիմֆոմաների ախտորոշումը կատարվում է հյուսվածքների, օրգանների բիոպսիայի արդյունքում ստացված ուռուցքային բջիջների ձևաբանական հետազոտությամբ և իմունոֆենոտիպավորմամբ, որը լիմֆոմաների ախտորոշման հիմքն է: Իմունոֆենոտիպավորման նպատակն է որոշել ուռուցքի B- կամ T-բջջային ծագումը, բջջային տարբերակման ընթացքի խաթարման մակարդակը, որը ՀԼ-ի և ՈՆՀ-ի համալիր ախտորոշման կարևորագույն բաղադրիչ է: Լիմֆոմաների ժամանակին և ճշգրիտ ախտորոշումը կարևորագույն խնդիր է ժամանակակից բժշկության մեջ և արդյունավետ բուժման գրավական է [Поддубная И.В., и др., 2013; Guastafierro S, et al., 2008]:

Լիմֆոմաների դեպքում կլինիկա-լաբորատոր քննությամբ հնարավոր չէ բացահայտել ներքին օրգանների օջախային և դիֆուզ փոփոխությունները և ըստ այնմ որոշել հիվանդության փուլն, ուստի անհրաժեշտ է կիրառել գործիքային հետազոտություններ՝ ՈւՁՁ-ն, համակարգչային (ՀՇ), մագնիտա-ռեզոնանսային (ՄՌՇ), բազմապարույրային (ԲՊՇ) շերտագրումներ:

Այդ առումով անգնահատելի է ՈւՁՁ-ն դերը, որպես մատչելի, ոչ ինվազիվ, ճառագայթային ծանրաբեռնվածություն չկրող մեթոդ, որը կարելի է կիրառել բազմիցս: ՈւՁՁ-ը մատչելի գործիքային քննություն է, և հնարավորություն է տալիս առաջին իսկ քայլով հայտնաբերել ստոծանու երկու կողմի ախտահարումները, ճշգրիտ փուլավորման նպատակով: ՈւՁՁ-ը մեծ դեր ու նշանակություն ունի ախտաբանական գործընթացներում ծայրամասային ավշային հանգույցների ներգրավումը գնահատելու համար, ինչպես նաև ախտահարված ավշային հանգույցների հյուսվածաբանական հետազոտությունների համար ամենատեղեկատվական ա/հ-ը հայտնաբերելու գործում: Այնինչ տարբեր պատճառներով, հետազոտող բժիշկը, հիմնվելով շոշափման արդյունքների վրա, անտեսում է ծայրամասային ա/հ-ի ՈւՁՁ-ը բիոպսիայից առաջ, որը կարող է բերել ոչ ճշգրիտ ախտորոշման և անցանկալի կրկնակի վիրաբուժական միջամտությունների: Բիոպսիայի համար միայն շոշափման մեթոդով ընտրված ա/հ-ը կարող է ինֆորմատիվ չլինել, քանի որ շոշափման մեթոդը չի կարող գնահատել հեռացվող ա/հ-ի ներքին կառուցվածքը:

Շոշափման զգայնությունը և ճշգրտությունն ըստ որոշ հեղինակների [Mazo M. J., 2008; Van Overhagen H. et al., 2004; Saiag P. et al. 2005] կազմում է 47 - 78 %: Այդ իսկ պատճառով ճշգրիտ ախտորոշման գործընթացը կարող է ձգձգվել ամիսներ, անգամ տարիներ: Կրծքավանդակի ուղիղ դիրքով ռենտգեն հետազոտությամբ հաճախ չեն հայտնաբերվում հետկրծոսկրային գոյացությունները, այնինչ հետազոտված հիվանդների մոտ ՈՇԼ-ի դեպքում 12.9%, ՀԼ-ի դեպքում 43.5% գրանցվել է միջնորմի ա/հ-ի ախտահարում, ուստի կարևորվում է առաջնային դիտարկման ընթացքում միջնորմի ՈւՁ-ին հետազոտությունը, մանավանդ որ վերին առաջային միջնորմը շատ լավ վիզուալիզացվում է ՈւՁ-մբ [Annessi V. et al., 2003]: ՈւՁ-ը, ոչ ինվազիվ մեթոդներից է, որ հնարավորություն է ընձեռում տալ առաջնային ճշգրիտ ախտորոշում, ի հայտ բերել ախտահարման տարածվածության աստիճանը ավշային և այլ օրգան-համակարգերում, գնահատել բուժման արդյունավետությունը: Այն նաև մեծ դեր ունի ռեցիդիվների հայտնաբերման գործում [Piscaglia F. et al., 2011]: Մի շարք աշխատանքներում բերվում են տվյալներ ՈւՁ-ին և դոպպլեր հետազոտություններով Ոչհոջկինյան և Հոջկինյան լիմֆոմաների տարբերակիչ ախտորոշման վերաբերյալ [Bazemore A. et al. 2002; Nakase K. et al. 2006]:

Վերոհիշյալից ելնելով տվյալ **աշխատանքի նպատակն է** Պարզաբանել ուլտրաձայնային հետազոտության նշանակությունը Ոչհոջկինյան և Հոջկինյան լիմֆոմաների դեպքում օրգան-համակարգերի առաջնակի ախտահարումների հայտնաբերման, ստույգ փուլավորման, ճշգրիտ ախտորոշման և կլինիկական ընթացքի գնահատման գործում:

Այդ նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները

1. Բացահայտել Ոչհոջկինյան լիմֆոմայի դեպքում ՈւՁ-ով հայտնաբերված օրգան-համակարգերի ախտահարման տարածվածության, հաճախականության ռանձնահատկությունները, կլինիկական ընթացքը:
2. Պարզաբանել Հոջկինի լիմֆոմայի դեպքում ՈւՁ-ով հայտնաբերված օրգան-համակարգերի ախտահարումների տարածվածության, հաճախականության ռանձնահատկությունները, կլինիկական ընթացքը :
3. Ընդգծել միջնորմի ՈւՁ-ն նշանակությունը լիմֆոմայի կասկածով հետազոտվողների առաջնակի ախտորոշման գործում:
4. Գնահատել ՈւՁ-ին հետազոտության անհրաժեշտությունն ախտահարված ավշային հանգույցներից բիոպսիայի նպատակով առավել ինֆորմատիվ ընտրության գործում:
5. Կատարել ՈՇԼ-ով և ՀԼ-ով հիվանդների հետազոտվող խմբերում ՈւՁ-մբ ստացված արդյունքների համեմատական վերլուծություն:

Աշխատանքի գիտական նորույթը

Առաջին անգամ ուլտրաձայնային հետազոտությամբ (ՈւՁ) ճշգրտվել է ավշային համակարգի ախտահարումների հաճախականությունը ՈՇԼ-ի և ՀԼ-ի դեպքում:

Առաջին անգամ ՈՇԼ-ի և ՀԼ-ի դեպքում ընդգծվել է ուլտրաձայնային հետազոտության նշանակությունը բիոպսիայի ենթարկվող ավշային հանգույցի ախտահարումն և ինֆորմատիվությունը գնահատելիս:

Առաջին անգամ առաջարկվել է լիմֆոմա կասկածով հիվանդների համալիր և ամբողջական հետազոտման ալգորիթմ, հիմնավորվել է միջնորմի առաջնային հետազոտության անհրաժեշտությունը:

Գործնական նշանակությունը

Լիմֆոպրոլիֆերատիվ հիվանդությունը հաստատելու կամ ժխտելու նպատակով համալիր ուլտրաձայնային հետազոտումը պարտադիր ցուցված է, ցանկացած տեղակայման անգամ մեկ ավշային հանգույցի ախտահարման առկայության դեպքում:

Լիմֆոմայի կասկածով հետազոտվողների առաջնակի ախտորոշման դեպքում ճշգրիտ ախտորոշում ստանալու և կրկնակի բիոպսիան բացառելու նպատակով պարտադիր է բիոպսիայի ենթարկվող ավշային հանգույցի ախտահարման աստիճանը գնահատել և ընտրություն կատարել ուլտրաձայնային հետազոտության տվյալներով:

Հիվանդների առաջնակի հետազոտման ընթացքում պրոցեսի տարածվածությունը ճշգրտելու նպատակով պարտադիր է առաջային միջնորմի ՈւՋ-ին հետազոտությունը, որով ի սկզբանե հայտնաբերվում են ախտահարումները ստոծանուց վեր և վար, ստույգ փուլավորում ստանալու համար:

Ատենախոսության փորձարկումը. Աշխատանքի նախնական պաշտպանությունը կայացել է ՀՀ պրոֆ. Ռ.Յոլյանի անվ. Արյունաբանական կենտրոնի գիտական խորհրդի /թիվ 1/15 20.03.15թ./ նիստում: Աշխատանքի հիմնական դրույթները ներկայացվել և զեկուցվել են՝

- *«Соврем. аспекты реабилитации в медицине» խորագրով V միջազգային գիտագործնական կոնֆերանսին, նվիրված Կուրորտաբանության ԳՀԻ 80-ամյակին (Երևան, 2008):*
- *Ալերգաբանանների և իմունաբանների միջազգային գիտաժողովին (Ղուբայ, 2009):*
- *«Արյունաբանության և փոխներարկաբանության արդի խնդիրները» խորագրով միջազգային գիտագործնական կոնֆերանսին, (Երևան-Ստեփանակերտ, 2010):*
- *Лучевая диагностика и научно-технический прогресс в неотложной абдоминальной хирургии» խորագրով IX միջազգային գիտագործնական կոնֆերանսին, (Մոսկվա, 2013):*
- *«Злокачественные лимфомы» խորագրով X միջազգային գիտագործնական կոնֆերանսին, (Մոսկվա, 2013):*

Հրատարակումները. Աշխատանքի թեմայով ՀՀ-ի և արտասահմանյան բժշկական մամուլում լույս են տեսել 5 գիտական աշխատություններ:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը շարադրված է համակարգչային տեսքով 129 էջերում և բաղկացած է ներածությունից, 4 գլուխներից (գրական ակնարկ, հետազոտության նյութի և մեթոդների նկարագրություն, սեփական հետազոտությունների արդյունքներ, քննարկում), եզրակացություններից, գործնական առաջարկություններից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքը լուսաբանված է 23 աղյուսակներով և 21 նկարներով: Գրականության ցանկը բաղկացած է 203 սկզբնաղբյուրից:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ. Հետազոտության մեջ ընդգրկվել են ՀՀ ԱՆ պրոֆ. Ռ.Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոնի 2006-2009թթ. լիմֆոմաներով 193 առաջնակի հիվանդ: Հետազոտության մեջ ընդգրկված 193 հիվանդները

բաժանվել են 2 խմբի և ստուգիչ խումբը կազմել են 100 պրակտիկ առողջ անհատներ՝ ԱԿ դիմած դոնորներ և զինակոչիկներ, առանց ԼՊՀ կլինիկական ախտանշանների, (56 տղամարդ, 44 կին), 18-60 տարեկան (միջին տարիքը՝ 37.9±1.8): ՈւՋՀ-մբ ստուգիչ խմբում ծայրամասային ա/հ-ի, լյարդի, փայծաղի կողմից ախտահարում չի հայտնաբերվել: Լյարդի և փայծաղի եզրագծերը եղել են հարթ, էխոգրաֆությունը նորմալ: Որովայնի խոռոչի օրգանների և հետորովայնազային տարածության ավշային հանգույցների մեծացում չի գրանցվել: Ընտրանքի մեջ ներառվել են նաև 2012թ. դիմած լիմֆոմա կասկածով առաջնակի հետազոտվողների բիոպսիայի նպատակով ՈւՋՀ-մբ ընտրված քսան ա/հ-ի ձևաբանական հետազոտության արդյունքները և համեմատվել 2006-2009թ. դիմած հիվանդների շոշափամբ ընտրված ա/հ-ի ձևաբանական հետազոտության արդյունքների հետ:

I խմբում ընդգրկվել են **Հռջկիկյան լիմֆոմայով 85** հիվանդ (44%), **II** խմբում ընդգրկվել են **Ոչհռջկիկյան լիմֆոմայով 108** հիվանդ (56%): Խմբերը բաժանվել են ենթախմբերի ըստ ձևաբանական ախտորոշման: Հետազոտվող հիվանդների տարիքային սահմաններն էին 18-78, իսկ միջին տարիքը՝ 44.9±17.4, այդ թվում ՀԼ-ով հիվանդների միջին տարիքը կազմել է 35.3±1.3, իսկ ՈՂՀ-ի՝ 54.6±1.2: Ըստ սեռի հիվանդները բաժանվել են հետյալ կերպ՝ 193 հիվանդից 54.9% (106 դեպք) տղամարդիկ են, իսկ 45.1% (87 դեպք)՝ կանայք, այսինքն տղամարդիկ կանանց համեմատ ավելի հաճախ են հիվանդանում :

Այդ օրինաչությունը պահպանվում է և ՀԼ-ի (57.64%), և ՈՂՀ-ի (52.78%) դեպքում, ինչը նաև հաստատվում է գրականության տվյալներով [Давыдов М.И. и др., 2014]:

ՀԼ-ով հիվանդների տարիքային խմբերի հիվանդացության պատկերը հետևյալն է. մինչև 20 տարեկան ունեցել ենք 9 (10.5%) հիվանդ, 21-30 տարեկան – 31 (36%) հիվանդ, 16 (18.8%)՝ 31-40 տարեկան, 13 (15.2%)՝ 41-50, 12 (14.3%)՝ 51-60, 61-70 տարեկան 3 (3.5%) հիվանդ և 70 տարեկանից բարձր 1(1.1%) հիվանդ:

ՈՂՀ-ով 108 հետազոտված հիվանդներից 57 (52.8%) տղամարդ էին, 51 (47.2%) կին, տարիքային խմբերի հիվանդացության պատկերը հետևյալն է. մինչև 20 տարեկան ունեցել ենք 2 (1.8%) հիվանդ, 21-30 տարեկան – 3 (2.8%) հիվանդ, 15 (13.9%)՝ 31-40 տարեկան, 21 (19.4%)՝ 41-50, 19 (17.6%)՝ 51-60, 61-70 տարեկան 33 (30.6%) հիվանդ և 70 տարեկանից բարձր 15 (13.9%) հիվանդ:

Հիվանդների հետազոտությունը կատարվել է ՈւՋ-ին հետևյալ սարքերով. Aloka SSD 500 օգտագործելով 3.5 և 5.0 ՄՀց հաճախականությամբ ուռուցիկ տվիչներ, Medison SA 6000 գծային C3-7ED 7.0 ՄՀց և կոնվեքս HL5 -9ED 3.5 ՄՀց և Acuson գծային 7.0 ՄՀց և 3.5 ՄՀց կոնվեքս տվիչներով: Կիրառվել է իրական ժամանակում մոխրագույն սանդղակային, բազմադիրքային (B-ռեժիմ) և գունավոր Doppler քարտեզագրմամբ ուլտրաձայնային մեթոդ:

Հետազոտության արդյունքները, մշակվել են պարամետրիկ և ոչպարամետրիկ վիճակագրության մեթոդներով, ստանդարտ վիճակագրական վերլուծության փաթեթների, մաթեմատիկական միջին արժեքի, միջին արժեքի շեղումների, Ստյուդենտի (t) գնահատման չափանիշի կիրառմամբ, կորելացիոն վերլուծությունը իրականացվել է Պիրսոնի մեթոդով:

Մեկնական հետազոտությունների արդյունքները. Հետազոտության մեջ ներառված 193 հիվանդների խմբերում՝ Հռջկիկյան (85) և Ոչ հռջկիկյան (108) և ենթախմբերում կատարվել է ՈւՋՀ-մբ հայտնաբերված ախտահարումների գնահատում, համեմատական

վերլուծություն: Մեր հետազոտության շրջանակներում նպատակ ենք ունեցել գնահատել ՈւՉՀ-ն դերն ու նշանակությունը լիմֆոմաների դեպքում ավշային և այլ օրգան-համակարգերում ախտահարումների առաջնակի հայտնաբերման, նրանց տարածվա ծության աստիճանի, տարբեր տեղակայման ախտահարումների համակցման, ձևաբանական ախտորոշում ստանալու նպատակով ամենաինֆորմատիվ ավշային հանգույցի հայտնաբերման, բուժման արդյունավետության և կլինիկական ընթացքի գնահատման գործում: Այդ նպատակի համար հետազոտել ենք 2 խմբերի հիվանդներին ՈւՉՀ-մբ հայտնաբերել ախտահարումները և կատարել համեմատական վերլուծություն: Լիմֆոմայի կասկածով հետազոտվողները մասնագիտական կլինիկա ընդունվելով կլինիկական քննությունից հետո անցել են նաև որովայնի խոռոչի օրգանների, ա/հ-ի, հետորովայնազային տարածության, ծայրամասային ա/հ-ի, միջնորմի, պլևրալ խոռոչի ուլտրաձայնային համալիր, ամբողջական հետազոտություն: Մեր աշխատանքի ընթացքում առանձին խմբերում հետազոտել ենք ՈՂԼ-ով և ՀԼ-ով կասկածով հետազոտվողների մոտ ՈւՉՀ-ին համալիր հետազոտությամբ հայտնաբերված ավշային և այլ օրգան համակարգերի ախտահարումների բնույթը, կատարել ենք հայտնաբերված ախտահարումների համեմատական վերլուծություն: Գնահատել ենք ՈւՉՀ-ն հնարավորությունները ճշգրիտ ախտորոշում ստանալու համար, բիոպսիայի նպատակով ինֆորմատիվ ա/հ-ի ընտրության գործում: Լիմֆոմաների ախտորոշման ժամանակ շատ կարևոր է հայտնաբերել ախտահարման առաջնային օջախները, ինչպես նաև օրգան-համակարգերում օջախների տարածվածությունն ու բաշխումը, նրանց առկայությունը ստոծանու երկու կողմերում, քանի որ այդ տվյալներով են որոշում Cotswald (1989թ.) լրացումներով Ann Arbor դասակարգմամբ հիվանդության փուլը, ծանրության աստիճանը, ըստ այդմ ընտրում բուժման արդյունավետ մեթոդը [Поддубная И.В. и др., 2004; Diehl V. et al., 2003]

Հիվանդացության բարձր հաճախականությունը ՀԼ-ով հիվանդների մոտ նկատվում է 18-40 տարիքային խմբում և կազմում է առաջնակի հայտնաբերված դեպքերի 65.8%-ը: Ըստ սեռի ունենք հետևյալ պատկերը՝ 49 (57.6%) տղամարդ և 36 (42.4%) կին: Ձևաբանական տարբերակից հիմնականում գերակշռել է նոդուլյար սկլերոզը - 61%, լիմֆոցիտար գերակշռումով տարբերակը - 17.6% և խառը-բջջայինը -14.1% (աղ.1):

Աղյուսակ 1

ՀԼ-ով հիվանդների ձևաբանական տարբերակների բաշխումն ըստ տարիքի և սեռի

Ձևաբանական տարբերակ n=85	n /%	Տարիքային սահման	Միջին տարիք (տարի)	Ար/իգ
Նոդուլյար սկլերոզ	52/61%	18-58	32,4 ±2.33	21/31
Լիմֆոցիտար գերակշռում	15/17.6%	18-57	30.7 ±3.02	12/3
Խառը-բջջային ձև	12/14.1%	23-70	46.0 ±4.35	10/2
Հյուսվ.տարբերակն անորոշ	6/7.3%	27-78	51.0 ±8.03	6/0

ՀԼ-ի դեպքում ըստ գրականության տվյալների ընդհանուր հիվանդացության տղամարդ/կին հարաբերակցությունը կազմում է 1,4:1 [Hoffbrand V. et al., 2011], բոլոր ենթատիպերի համար բացի նոդուլյար սկլերոզից, որի դեպքում ավելի հաճախ հիվանդանում են երիտասարդ կանայք [Thomas R., 2002]:

ՈՂԼ-ի ըստ տարիքի զարգացման հետազոտությունն ի հայտ է բերել հիվանդության մանիֆեստացիայի պիկ 40 – 78 տարեկան և կազմել է ընտրված հիվանդների 81.5 %: ՈՂԼ-ի ձևաբանական ենթատեսակների վերլուծությունը ցույց է տվել, որ գերակշռում է Բ-բջջային լիմֆոման 101(93.5%) հիվանդ: Բ-բջջային լիմֆոմաններից ավելի շատ հանդիպում է

դիֆֆուզ B-բջջային լիմֆոնան 32(29.7%) դեպք, իսկ 24(22.2%) հիվանդի մոտ - լիմֆոցիտար լիմֆոնա, փայծաղի լիմֆոնա՝ 13(12.0%), ֆոլիկուլյար լիմֆոնա 9 (8.3%) դեպք, դիֆֆուզ մանրբջջային լիմֆոնա՝ 8 (7.4%), մարգինալ գոտու նոդալ լիմֆոնա՝ 7(6.5 %), միջնորմի խոշորբջջային լիմֆոնա՝ 8(7.4 %)։ Հազվադեպ հանդիպում են T-բջջային լիմֆոնաները 4 (3.7%) հիվանդ T-լիմֆոբլաստ լիմֆոնայալ և 3(2.8%) հիվանդ՝ անապլաստիկ խոշորբջջային լիմֆոնայով (աղյ. 2):

Աղյուսակ 2

ՈՂԼ-ով հիվանդների ձևաբանական տարբերակների բաշխումն ըստ տարիքի և սեռի

Ձևաբանական տարբերակ n=108	n /%	Տարիքային սահման	Միջին տարիք	Ար/իգ
B-բջջային լիմֆոնաներ				
B-լիմֆոցիտար լիմֆոնա	24/22.2%	40-78	57.1±2.96	13/11
Փայծաղի լիմֆոնա	13/12.0%	54-70	64.0±1.38	3/10
Ֆոլիկուլյար լիմֆոնա	9/8.3%	20-70	52.5±6.07	6/3
Մարգինալ գոտու նոդալ լիմֆոնա (MALT)	7/6.5%	33-70	53.0±5.59	3/4
Դիֆֆուզ B-խոշորբջջային լիմֆոնա	32/29.7%	34-77	56.1±3.15	20/12
Միջնորմի խոշորբջջային լիմֆոնա	8/7.4 %	22-53	37.5 ±5.15	1/7
Դիֆֆուզ մանրբջջային լիմֆոնա	8 /7.4%	26-69	48.0 ±5.7	7/1
T- բջջային լիմֆոնաներ				
T-լիմֆոբլաստ լիմֆոնա	4/3.7%	19-71	45.7 ±14.57	1/3
Անապլաստիկ խոշորբջջային լիմֆոնա	3/2.8%	17-48	36.3 ±12.97	3/0

Լիմֆոնաների նախնական փուլերում ՈւՂԶ-մբ որովայնի խոռոչում ավելի հաճախ դիտարկվում են եզակի ավշային հանգույցներ կլոր, հստակ, հարթ եզրագծերով, հիպոէխոգեն, որոնք չեն ճնշում, տեղաշարժում հարևան հյուսվածքները:

Մեր դիտարկումներով ախտահարված ավշային հանգույցների նվազագույն չափը, որ բացահայտվել է ՈւՂԶ-մբ 0.5x0.4x0.7 սմ է, լյարդի և փայծաղի դրունքում հստակ տարբերակվել են 0.5-0.7 սմ տրամագծով ա/հ-ներ, որոնք հիմնականում եղել են հիպոէխոգեն՝ 94.3%: ՇԼ-ի դեպքում որովայնի խոռոչի, հետորովայնամզային տարածության ա/հ-ի ախտահարումն 23.5% էր, որոնք եղել են եզակի, և նրանց չափերը չի անցել 2.5 սմ-ից, բայց ա/հ-ի կառուցվածքը եղել է փոփոխված: ՈՂԼ-ի դեպքում որովայնի խոռոչի ա/հ-ի ախտահարումը կազմել է 37.9 % (41 դեպք) Հատկապես հիվանդության ուշ փուլերի ընթացքում էխոգրամայով դիտվում են բազմաթիվ ավշային հանգույցներ և/կամ տարբեր չափի կոնգլոմերատներ, որոնք կարող են գրավել որովայնի խոռոչի մեծ մասը ճնշելով հարակից օրգանների, նյարդային հյուսակների, անոթների վրա, առաջացնելով օրգանների ֆունկցիաների խանգարում, տարբեր տեղակայման ցավ, այտուց: Հետազոտության ընթացքում հիմնականում հայտնաբերվել են 1.5-3.0 սմ չափերով ա/հ - 47%, 3.0 սմ-ից ավել

չափ ունեցող հանգույցները կազմել են 36.3%: Ավշային հանգույցների կոնգլոմերատներ նկատվել է 34.8% հիվանդների մոտ, որոնցից 77.6% մոտ եզրագծերը եղել են հստակ:

Աղյուսակ 3

Չոջիկյան և Ոչոջիկյան լիմֆոմայով հիվանդների կլինիկա - ձևաբանական բնութագիրը

		ՀԼ-ով հիվանդները	ՈՀԼ հիվանդները
Դեպքերի թիվը		85	108
Միջին տարիք (տարի)		35.3±0,7	54.6±0,5
Տղամարդ		58% (n=49)	52.8% (n=57)
Կանայք		42% (n=36)	47.2% (n=51)
հիվանդության փուլն ըստ AnnArbor դասակարգման	I	2.3% (n= 2)	1.8% (n=2)
	II	42.4% (n=36)	16.7% (n=18)
	III	31.8% (n=27)	31.5% (n=34)
	IV	23.5% (n=20)	50 % (n=54)
Ավշահանգույցների խմբերի քանակը	≤ 2	36.4% (n=31)	13.9% (n=15)
	≥ 2	18.8% (n=16)	37 % (n=40)
Փայծաղ	մեծացում	10.6% (n=9)	45.4% (n=49)
	օջախային փոփոխ .	5.9% (n=5)	6.5% (n=7)
Միջնորմի ախտահարում		43.5% (n=37)	12.9% (n=14)
Աճուկային ա/հ		34.1% (n=29)	42.6% (n=45)
Անոթային ա/հ		35.3% (n=30)	39.8% (n=43)
Պարանոցային ա/հ		52.9% (n=45)	43.5% (n=47)
Վերանրակային		31.8 % (n=27)	22.2% (n=24)
Որովայնի խոռոչի և հետորովայնաձգային ա/հ		23.5% (n=20)	37.9% (n=41)
Ոսկրածուծի ախտահարում		1.2% (n=1)	13.9% (n=15)
Սերոզիտներ		2.3% (n=2)	13.9% (n=15)
Պնևմոթորաքս		1.2% (n=1)	-
Վահանաձև գեղձի ախտահարում		7.1% (n=6)	9.2% (n=10)
Լյարդի ախտահարում		12.9% (n=11)	36.1% (n=39)
Օջախային փոփոխություններ լյարդում		-	8.3% (n=9)
Ստամոքսի ախտահարում		-	0.9% (n=1)

Որովայնի խոռոչի օրգանների ախտահարումների համեմատական վերլուծությունը թույլ է տվել եզրակացնել, որ առավել արտահայտված փոփոխություններ նկատում ենք ՈՀԼ-ի դեպքում (աղյ. 3): Մեր կողմից հետազոտվող ՈՀԼ-ով և ՀԼ-ով հիվանդների խմբում ավշային համակարգի ախտահարումների տեղակայումը և նրանց համակցումը տարբեր են ՈՀԼ-ի և ՀԼ-ի դեպքում: Օրինակ հետազոտվող խմբում ՀԼ-ի դեպքում միայն որովայնի խոռոչի ա/հ-ի ախտահարում (առանց այլ ախտահարումների) չի դիտարկվել (աղյ. 4): Հարկ է նշել, որ լիմֆոմաների դեպքում միևնույն հիվանդի մոտ տարբեր շրջանների ծայրամասային ա/հ-ի ախտահարման աստիճանը և էխտկառուցվածքը նույնը չէ: Այս երևույթը պայմանավորված է ախտաբանական պրոցեսի մեջ ա/հ-ի ընդգրկման տարբեր վաղեմությամբ: Ավելին՝ ավշային հոսքի ճանապարհին միևնույն շրջանի ա/հ-ը կարող են

գտնվել ախտահարման տարբեր փուլերում, իսկ ախտահարված ա/հ-ի շուրջ գտնվեն ռեակտիվ փոփոխություն կրածները:

Աղյուսակ 4

Ոչհոջլիկյան և Հոջլիկյան լիմֆոմայով հիվանդների մոտ ախտահարված ա/հ-ի տեղակայման հաճախականությունը և համակցումը

Ախտահարումներ	ՀԼ, n=85		ՈՀԼ, n=108	
	% ընդհանուրից	դեպք	% ընդհանուրից	դեպք
Միայն միջնորմ	6.0	5	3.6	4
Միջնորմի և վ/ա ա/հ	18.0	16	0.9	1
Միջնորմի, որովայնի և ծայրամասային ա/հ	11.8	10	1.8	2
Ծայրամասային ա/հ	18.0	16	10.2	11
Որովայնի խոռոչի և ծայրամասային ա/հ	9.4	8	58.3	63
Վերանրակային ա/հ	31.8	27	22.2	24
Միայն որովայնի խոռոչի	-	-	25.0	27
Առանց ծայրամասային ա/հ-ի ախտահարման	1.6	9	26.8	29
Վահանաձև գեղձի համակցված ախտահարում	7.0	6	9.2	10


Նկատի ունենալով նշված իրավիճակն ավելի է կարևորվում բիոպսիայից առաջ ՈւՁՀ-ը: Բիոպսիայի համար միայն շոշափման մեթոդով ընտրված ա/հ-ը հնարավոր է ինֆորմատիվ չլինի, քանի որ շոշափումը չի բացահայտում ա/հ-ի ներքին կառուցվածքը: Կրկնակի վիրաբուժական միջամտությունները բացառելու համար բիոպսիայի նպատակով ա/հ-ի ընտրություն կատարելիս, շատ կարևոր է արյունաբանի, ՈւՁՀ-ն մասնագետի, վիրաբուժի համագործակցությունը:

Մեր կողմից հետազոտվող ՀԼ-ով հիվանդների ախտահարված ծայրամասային ա/հ-ում դրայլեր հետազոտությամբ հիմնականում դիտվել է 1-2 անոթ, իսկ ՈՀԼ-ի դեպքում ախտահարված ա/հ-ում նկատվել է ավելի հարուստ անոթավորում: Մինչ բուժումը լիմֆոմայով ախտահարված ավշային հանգույցներում 54.3% հիվանդների մոտ հայտնաբերվել է անոթավորում, իսկ 45.7% առանց անոթավորման: ՈՀԼ-ի դեպքում ախտահարված ավշային հանգույցների 60%-ն ունեցել են հարուստ անոթավորում ինչպես կենտրոնում, այնպես էլ ծայրամասերում, ՀԼ-ով ախտահարված ա/հ-ի 47.2% մոտ եզակի մեկ-երկու անոթ, անոթավորում չի դիտվել ՈՀԼ -ի դեպքում 40.0 %, ՀԼ-ի՝ 52.8%: Արդյունավետ բուժման ընթացքում անոթները պակասում են:Մեր կողմից դրայլեր հետազոտություններով հայտնաբերված փոփոխություններն ավելի քիչ են, քան գրականության մեջ գետեղված տվյալները, ինչը մեր կարծիքով, պայմանավորված է ՈւՁ-ին սարքերի տարբեր տեխնոլոգիական հնարավորություններով:

ՈՀԼ-ի և ՀԼ-ի դեբյուտում շատ է գրանցվում միջնորմի ա/հ-ի ախտահարում (ՀԼ-ի դեպքում 37, ՈՀԼ-ի՝ 14 դեպք):ՈւՁ-ին մեթոդի հնարավորությունները միջնորմի

գոյացությունների հետազոտման գործում առ այսօր հետազոտված են ոչ լիարժեք: Սովորաբար միջնորմի ՌԻՉ-ը համարվում է ոչ արդյունավետ, քանի որ թոքի հյուսվածքն անդրադարձնում է ուլտրաձայնը, ուստի ՌԻՉ-ը կիրառվում է հիմնականում պլերալ խոռոչի հեղուկի հայտնաբերման նպատակով: Այսօր անհարկի քիչ է օգտագործվում ՌԻՉ-ին մեթոդը միջնորմի հետազոտության գործում, այնինչ ՌԻՉ-ը հայտնաբերում է միջնորմի հատկապես հետկրծոսկրային գոյացությունները, որոնք չեն հայտնաբերվում ստանդարտ ռենտգեն հետազոտությամբ, ավելին բացահայտում են գոյացության ներքին կառուցվածքը:

Ուստի կարևորվում է առաջնային դիտարկման ընթացքում միջնորմի ՌԻՉ-ին հետազոտությունը, որ թույլ է տալիս ոչ միայն հայտնաբերել ուռուցքն, այլև գնահատել ուռուցքի չարորակության նշանների առկայություն/բացակայությունը և արդյունքում ստանալ ճշգրիտ ախտորոշում և փուլավորում (Նկ.1): Միջնորմի վերաորտալ և հարտախեղալ շրջանի ՌԻՉ-ներ կատարվում է վերկրծոսկրային պատուհանով, առաջային միջնորմի հետազոտման համար օգտագործում ենք հարկրծոսկրային պատուհանը, միջկողային տարածությունները: Վերաորտալ շրջանը ՌԻՉ-ն համար նպատակահարմար է, քանի որ այս շրջանն առատ է անոթներով, ինչը թույլ է տալիս անգամ փոքր գոյացությունների ստույգ տեղագրությունը ճշտել ցանկացած հարթության վրա:



Նկ. 1. Վերին առաջային միջնորմի ախտահարման պատկեր

Միջնորմի, բիֆուրկացիայից ստորև տեղակայված շրջանի ՌԻՉ-ը դժվար է՝ խորը տեղակայման և բարդ անատոմիական կառուցվածքի պատճառով:


ՈՆՀ-ի դեպքում փայծաղի մեծացում 15.0 սմ մինչև 26.0 սմ (նորման 12.5–14.0 սմ) դիտվել է 45.3% (49) հիվանդի մոտ, որից 22 (20.4%) հիվանդի մոտ նկատվել է փայծաղի դիֆուզ փոփոխություն, 7 դեպքում օջախային փոփոխություններ: Հատկապես ՈՆՀ-ի դեպքում լյարդը և փայծաղը մեծանում են այնքան, որ գրավում են որովայնի խոռոչի մեծ մասը, շերտավորվելով մեկը մյուսի վրա (համբույրի սիմպտոմ): Մեծացած լյարդը և փայծաղը ճնշում են հարևան օրգանների վրա, խաթարելով նրանց նորմալ գործունեությունը:

Սպլենոմեգալիայի բոլոր դեպքերում փայծաղի եզրագծերը հարթ ու հստակ են, 69% դեպքում հիպոէխոգեն, 31% դեպքում՝ նորմալ էխոգայնությամբ: Քանի որ ըստ գրականության տվյալների արյունաբանական հիվանդությունների դեպքում փայծաղը մեծ է համարվում, երբ նրա երկարությունն անցնում է 15սմ-ից, հաշվարկել ենք մինչև 15սմ և 15սմ-ից մեծ փայծաղի դեպքերը ՈՆՀ-ի տարբեր ձևաբանական խմբերում և արդյունքները եղել են նույնը (աղ.5):

ՈՂԼ-ի դեպքում փայծաղի երկարությունը և լայնությունն ըստ ՈւՂԶ-ն

Ոչ հոջկինյան լիմֆոմա	Փայծաղի երկարություն		Փայծաղի լայնություն	
	M ± m	P ₁	M ± m	P ₂
Բ-խոշորբջջային լիմֆոմա	13.78 ± 0.94	ոչ/հ	5.04 ± 0.29	ոչ/հ
Փայծաղի լիմֆոմա	19.54 ± 0.95	<0.001	8.9 ± 0.48	<0.001
Ֆոլիկուլյար լիմֆոմա	14.1 ± 0.76	ոչ/հ	5.2 ± 0.68	ոչ/հ
Լիմֆոցիտար լիմֆոմա	17.28 ± 0.62	<0.001	7.3 ± 0.6	<0.001
Մարգինալ գոտու լիմֆոմա	12.73 ± 0.33	ոչ/հ	4.7 ± 0.51	ոչ/հ
Մանր բջջային լիմֆոմա	16.29 ± 1.36	<0.01	5.8 ± 1.07	<0.01
Միջնորմի լիմֆոմա	10.94 ± 0.8	ոչ/հ	3.0 ± 0.4	ոչ/հ

* փայծաղի երկարության- P₁ և լայնության- P₂ համեմատությունը ստուգիչ խմբի հետ ՈՂԼ-ի և ՇԼ-ի դեպքում, երբ փայծաղում հայտնաբերել ենք օջախներ, որպես կանոն նրանք եղել են բազմաթիվ, հիպոէխոգեն, անհարթ հստակ եզրագծերով, 0.5-2.5 սմ տրամագծով: ՈՂԼ-ի դեպքում բոլոր ձևաբանական խմբերում նկատվել է փայծաղի ախտահարման մեծ տոկոս՝ 40.6 - 100% (նկ.2):



Նկ. 2. ՈՂԼ-ի և ՇԼ-ի դեպքում տարբեր ձևաբանական խմբերում փայծաղի մեծացման համեմատական հաճախականությունը

Սպլենոմեգալիայի բոլոր դեպքերում փայծաղի եզրագծերը հարթ ու հստակ են, 69% դեպքում հիպոէխոգեն, 31% դեպքում՝ նորմալ էխոգայնությամբ, դիֆֆուզ փոփոխված 85% դեպքում, համասեռ կառուցվածքով՝ 15% դեպքում: ՇԼ-ի դեպքում փայծաղի և որովայնի ա/հ-ի ախտահարումը հազվադեպ է հանդիպում և համարվում է կանխատեսման

ոչ բարենպաստ գործոն: Մեր կողմից հետազոտվող ՀԼ-ով հիվանդների մոտ փայծաղի մեծացում նկատվել է 10.6 % դեպքում և երկարությունը չի անցել 16.0 սմ-ից:

Որովայնի խոռչի ա/հ-ի և փայծաղի համակցված ախտահարում նկատվել է ՈՀԼ-ի բոլոր ձևաբանական խմբերում ավելի հաճախ մարզինալ գոտու և լիմֆոցիտար լիմֆոմայի դեպքում համապատասխանաբար 42.8 և 54.1%: Ընդհանրապես առանց ծայրամասային ա/հ-ի ախտահարումներով հետազոտվող ունեցել ենք ՈՀԼ-ի դեպքում 29 հիվանդ (26.8 %), ՀԼ-ի դեպքում 9 (10.6%) այս դեպքում ախտորոշումը կատարվում է ավելի ինվազիվ մեթոդներով:

Աղյուսակ 6

Փայծաղի, ա/հ-ի ախտահարումների բնույթը և ա/հ-ի տեղակայումը ՈՀԼ-ի տարբեր ձևաբանական խմբերում

Նոզոլոգիա	Լիմֆոցիտար n=24 %	Բ-խոշոր բջջային n = 32 %	Մարզինալ գոտու n=7 %	Փայծաղի լիմֆոմա n=13 %	Բ-մանր բջջային n=8 %	Ֆոլիկուլյար n=9 %
ա/հ-ի և փայծաղի ախտահարում						
Որովայնի ա/հ	54.2	12.5	42.8	23.0	75.0	33.3
Որովայնի ա/հ-ի կոնգլոմ.	4.1	6.3	-	-	12.5	11.1
Վերանր. ա/հ	33.3	12.5	-	-	-	22.2
Փայծաղի ախտահարում	91.6	40.6	42.8	100	75.0	44.4
Կոնքի ա/հ	20.4	-	-	-	-	-
Փայծաղի, որով. ա/հ-ի ախտահ.	54.1	9.4	42.8	23.0	37.5	11.1

Որովայնի խոռչի ա/հ-ի ախտահարման բարձր տոկոս է նկատվել լիմֆոցիտար և մանր բջջային լիմֆոմաների խմբերում համապատասխանաբար 54.2% և 75.0% (աղ.6,7):


Աղյուսակ 7

Փայծաղի, ա/հ-ի ախտահարումների բնույթը և ա/հ-ի տեղակայումը ՀԼ-ի տարբեր ձևաբանական խմբերում


Նոզոլոգիա	Նոդալ սկլերոզ n=52 %	Լիֆոց.գեր. n=15 %	Խառը բջջային n=12 %	Անորոշ n=6 %
ա/հ-ի, փայծաղի ախտահարում				
Որովայնի ա/հ-ի ախտ.	21.2	26.7	33.3	33.3
Փայծաղի ախտահարում	27.0	6.7	25.0	25.0
Փայծաղի, որով. ա/հ-ի ախտահարում	19.2	6.7	16.7	16.7
Վերանրակ. ա/հ	40.4	46.7	16.7	16.7
Կոնքի ա/հ	1.9	20.0	--	--
Որովայնի կոնգլոմերատ	--	--	--	--

Վերանրակային ա/հ-ը պրոցեսի մեջ են ընդգրկվել ֆոլիկուլյար, Բ-խոշոր բջջային, լիմֆոցիտար լիմֆոմաների դեպքում 12.5-33.3%: Ընդդրում վերանրակային ա/հ-ի ախտահարում ավելի շատ՝ 33.3% դիտվել է լիֆոցիտար լիմֆոմայի դեպքում: Որովայնի խոռոչի ա/հ-ի կոնգլոմերատներ նկատվել են ֆոլիկուլյար, Բ-խոշոր բջջային, լիմֆոցիտար, Բ-մանր բջջային ձևաբանական խմբերում 4.1-12.5% դեպքում: Կոնքի խոռոչի ա/հ-ի ախտահարում նկատվել է միայն լիմֆոցիտար լիմֆոմայով հիվանդների մոտ 20.4% դեպքում, որը պատճառ է հանդիսացել կոնքի խոռոչի ցավերի և փոքր չափաբաժիններով հաճախամիզության: Պարզել ենք, որ ՀԼ-ի և ՈՀԼ-ի դեպքում միայն միջնորմի ախտահարում համապատասխանաբար կազմել է 6.0% և 3.6%, որը պայմանավորում է լիմֆոմաների ախտորոշման գործում ավելի ինվազիվ մեթոդների կիրառում, քանի որ չեն հայտնաբերվել մեծացած և ախտահարված ծայրամասային ա/հ-ներ:

Կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ միջնորմի ախտահարումն ուղեկցվել է պրոցեսի մեջ վերանրակային ա/հ-ի ընդգրկմամբ ՀԼ-ի դեպքում 43.2%, ՈՀԼ-ի դեպքում 7.1%:



Նկ. 3. ՈՀԼ-ի և ՀԼ-ի դեպքում ախտահարված ա/հ-ի տեղակայման համեմատական հաճախականությունը (1.աճուկային, 2.պարանոցային, 3.անոթային, 4.վ/ա, 5.որովայնի խոռոչ, 6.միջնորմ)



